ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2023/85

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մայիսի 2023 թ. N 85

ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փող.10

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2023թ. մայիսի 22-ին քննարկեց «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ ԵՀԲՔ, քոլեջ, ՄՈւՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	01 մարտի 2022 թ.
ինքնավերլուծության ներկայացում	17 հունիսի 2022 թ.
փորձագիտական այցի իրականացում	14-17 նոյեմբերի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	23 հունվարի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	27 փետրվարի 2023թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 2-ը՝ «Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ», գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԵՀԲՔ-ի կրթական ծրագրերը համահունչ են քոլեջի առաքելությանը, բխում են ՊԿՉ-ներից, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների և ակնկալվող ուսումնառության արդյունքների, շարունակաբար բարելավվում են դասավանդման և գնահատման մեթոդները: Առկա են ծրագրերի գնահատման որոշակի մեխանիզմներ: ԵՀԲՔ-ն իր ռազմավարությամբ շեշտադրել է աշխատաշուկայի պահանջներին համահունչ բարձրորակ կրթական ծրագրերի իրականացումը և կրթության որակի ապահովումը: Ուսումնասիրելով աշխատաշուկայի պահանջարկն ու մասնագիտական ոլորտերում նորամուծությունները, շարունակաբար բարելավում է իր կրթական ծրագրերը: Քոլեջը կարևորում է ուսանողակենտրոն ուսուցումը և սովորողների գործնական հմտությունների ու կարողությունների ձեռքբերումը:

Քոլեջը ձգտում է մրցույթի միջոցով հավաքագրել որակյալ դասախոսական կազմ: Քոլեջում դասավանդման գործընթացում ներգրավված են նաև գործատուներ և պրակտիկ ոլորտի ներկայացուցիչներ: Փորձ է արվում շարունակաբար գնահատել դասախոսների կարիքները և ըստ վերհանված կարիքների՝ իրականացնել կատարելագործման աշխատանքներ: Քոլեջում գործող Երիտասարդ դասախոսների դպրոցն աջակցում է մանկավարժական կրթություն չունեցող դասախոսներին, կազմակերպվող միջոցառումները նպաստում են սկսնակ դասախոսների մասնագիտական և մանկավարժական կարողությունների զարգացմանը:

ԵՀԲՔ-ը կարևորում է երիտասարդ կադրերով համալրումը և դասախոսների աշխատավարձի բարձրացումը, որը կայունության համար հիմքեր է ստեղծում: Առկա է դասախոսների ռեզերվ, ներգրավված են ոլորտի պրակտիկ դասավանդողներ, մշակվում և իրականացվում են դասավանդող կազմի կատարելագործմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև, կարևորում է վարչական ծառայությունների մատուցման որակի բարձրացումը:

Քոլեջն իր գործունեության ընթացքում ձևավորել և ադապտացրել է ենթակառուցվածքներ, ունի ֆինանսական և գործառնական կառավարման ինստիտուցիոնալ հենք, կրթական ծրագրերի իրականացման և կայունության ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսներ, շարունակաբար ջանքեր է գործադրում դրանք համալրելու, թարմացնելու ուղղությամբ: Մասնագիտական պրակտիկայի իրականացման համար օգտագործվում են նաև գործընկեր հաստատությունների (կլինիկաներ, գիտահետազոտական կենտրոններ և այլն) ռեսուրսները: Ստեղծվել է ուսանողների կարիքներին համապատասխան կրթական միջավայր:

2. ***Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը***

Քոլեջն ունի իր գործունեության նպատակներն արտահայտող հստակ ձևակերպված առաքելություն, առանձնացված զարգացման ռազմավարական նպատակներ՝ բժշկության ոլորտում ապահովելով միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը: ԵՀԲՔ-ն իրականացնում է բժշկական ոլորտի աշխատաշուկայի կարիքներին համապատասխանող մասնագիտություններ: Գործում է առաքելության և նպատակների իրականացման արդյունքների հաշվետվությունների համակարգը: Քոլեջի վարչակազմը համագործակցում է ներքին և արտաքին շահակիցների հետ, առկա են շահակիցների կարիքների վերհանման որոշ մեխանիզմներ:

Քոլեջում կառավարչական գործընթացներն ապահովված են անհրաժեշտ փաստաթղթային հենքով, կառավարման մարմինների ծավալած գործունեությունը միտված է քոլեջի ՌԾ-ի արդյունավետ իրականացնանը: Քոլեջն ունի կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլաններ, դրանց գործարկումը և համարժեք հաշվետվությունները քննարկվում են ԿԽ-ում, ստորաբաժանումներում, ամբիոններում: ԵՀԲՔ-ում կառավարչական գործընթացներն արդյունավետ են, առկա է ռազմավարական կառավարման և պլանավորման գործիքակազմ, գործում են կրթական գործընթացի գնահատման և մշտադիտարկման որոշ մեխանիզմներ, ներդրված հաշվետվողականության համակարգը խնդիրներ շեշտադրող է: Ֆինանսական ռեսուրսները բաշխվում են սահմանված քաղաքականությամբ:

Քոլեջի որակի ապահովման քաղաքականությամբ գլխավոր խնդիր է սահմանված իրականացվող գործընթացների գնահատման մեխանիզմների մշակումն ու ներդնումը, սակայն հստակեցված չէ որակի ապահովման համակարգի առաքելությունը և տեսլականը, հստակ չեն որակի ներքին համակարգի առջև դրված խնդիրները: Դեռևս ձևավորված չէ շահակիցների միասնական պատկերացումը որակի ապահովման համակարգի վերաբերյալ:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը:***

ԵՀԲՔ-ում առկա են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ: Դիմորդների ներգրավմանն ուղղված ակտիվ աշխատանքները նպաստում են դիմորդների շրջանում քոլեջի վերաբերյալ հետաքրքրվածության ավելացմանը և դիմորդների թվի շարունակական աճին:

Քոլեջում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին՝ Ուսանողական խորհուրդ, որը ներգրավված է քոլեջում առկա բոլոր գործընթացներում: Սովորողներն ունեն հնարավորություն բարձրաձայնելու իրենց կրթական կարիքների մասին, դասավանդողները և վարչական աշխատակիցները մշտապես հասանելի են ուսանողների համար:
Քոլեջը հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնությունները սահմանելիս հիմնականում դիտարկում է աշխատակիցների կողմից տարբեր ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրումն ու ուսանողների հետազոտական/վերլուծական մտածողությունը զարգացնող գործողությունները: Հետազոտական բաղադրիչ ունեցող առաջադրանքների կատարումը նպաստում է ուսանողների մոտ վերլուծական հմտությունների զարգացմանը:
Քոլեջում առկա են ուսումնական գործընթացի և հետազոտական/վերլուծական աշխատանքների զուգակցման որոշ մեխանիզմներ, կարևորվում է ինքնուրույն, անհատական, խմբային աշխատանքների կատարումը:
Քոլեջում կանոնակարգված են ներքին և արտաքին հաշվետվողականության գործընթացները, հաստատությունն ապահովում է իր գործունեության տարբեր կողմերի վերաբերյալ տեղեկատվության տարածումն ու թափանցիկությունը, ինչպես նաև իր փորձառությամբ կիսվելու և իր կուտակած գիտելիքներն ու արժեքները հանրային լայն շրջանակներին հասանելի դարձնելու պատրաստակամությունը:
ԵՀԲՔ-ն իր ՌԾ-ում սահմանել է արտաքին կապերի և միջազգայնացման հարցերում հավակնոտ նշաձող: Գոլեջը համագործակցում է ՀՀ-ում գործող բժշկական հաստատությունների և քոլեջների հետ, սակայն միջազգայացման գործընթացները համակարգված չեն, նպատակները հստակեցված չեն, և չեն տրամադրվում սահմանված նշաձողին համապատասխան մարդկային և նյութական ռեսուրսներ: Առկա են որոշակի համագործակցության ծրագրեր, սակայն քոլեջը միջազգայնացմանը միտված համապարփակ գործողությունների ծրագիր դեռևս չի մշակել:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. **«Երևանի հենակետային բժշկական քոլեջ» ՓԲԸ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
   - Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Արտաքին կապեր և միջազգայնացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը,

2. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - ռազմավարական ծրագրի գնահատման գործուն մեխանիզմների ներդրմանը,
   - արտաքին և ներքին գործոնների ազդեցության գնահատման և տվյալների հավաքագրման մեխանիզմների բարելավմանը,
   - կրթականավմանըքին շարունակական մշտադիտարկմանը՝ներգրավելով արտաքին շահակիցների,
   - դասախոսների մասնագիտական զարգացման միջոցառումների կազմակերպմանը՝ հիմնված բացահայտված կարիքների վրա,
   - դասախոսական կազմի կողմից միջազգային լավագույն փորձի ուսումնասիրմանը և տեղայնացմանը կրթական ծրագրերում,
   - այլընտրանքային ֆինանսական ռեսուրսներ ներգրավելու մեխանիզմների ներդրմանը,
   - ԵՀԲՔ հետադարձ կապի ապահովման մեխանիզմների արդյունավետության գնահատմանը և լավարկմանը
   - անձնակազմի և սովորողների անգլերենի իմացության մակարդակը բարձրացմանը:
3. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
4. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել Երևանի հենակետային բժշկական քոլեջի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2023 թ. մայիսի 30
ք.Երևան